«Ֆասթ Բանկ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 32/6
(+374 10) 51 00 00

*Հավելված 1*

*Հաստատված է
Տնօրինության 27.06.2024թ.-ի նիստի
Թիվ DEC 12-38 արձանագրությամբ
Կիրառության մեջ է 01.07.2024թ.-ից*

# Տեղեկատվական ամփոփագիր

## Անշարժ գույքի գրավով ապահովված վարկերի վերաֆինանսավորման հատուկ առաջարկ

| | | |
|---|---|---|
| **Առաջարկի գործողության ժամկետ** | Մինչև 01/01/2025թ. ընդունված վարկային դիմումների համար | |
| **Տեսակը** | Եկամուտների հիմնավորմամբ | Առանց եկամուտների հիմնավորման |
| **Վարկի նպատակը** | Վարկառուի և ընտանիքի անդամների այլ ֆինանսական կազմակերպություններում գործող վարկային պարտավորությունների վերաֆինանսավորում | |
| **Վարկի արժույթ** | ՀՀ դրամ | |
| **Վարկի ժամկետ** | 24-120 ամիս | 24-84 ամիս |
| **Վարկի գումար** | 2,500,000 - 80,000,000 ՀՀ դրամ | 2,500,000 - 30,000,000 ՀՀ դրամ |
| **Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք** | 24-84 ամիս- վերաֆինանսավորվող վարկի տոկոսից 2%-ով ցածր, բայց ոչ պակաս քան 15.0 % (հաստատուն)<br>85-120 ամիս- վերաֆինանսավորվող վարկի տոկոսից 2%-ով ցածր, բայց ոչ պակաս քան 16.0 % (ճշգրտվող) | 24-84 ամիս- վերաֆինանսավորվող վարկի տոկոսից 2%-ով ցածր, բայց ոչ պակաս քան 17.5 % (հաստատուն) |
| **Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույք** | 24-84 ամիս- 16.1-24.0% (հաստատուն)<br>85-120 ամիս- 17.2-24.0% (ճշգրտվող) | 24-84 ամիս- 19.0-24.0% (հաստատուն) |
| **Գրավի առարկա** | անշարժ գույք<br>(Հիփոթեքի պայմանագիրը վավերացվում է նոտարական կարգով)<br>Վարկը հաստատող լիազոր մարմնի կողմից կարող է պահանջվել այլ ապահովման միջոց | |
| **Գրավադրվող անշարժ գույքին ներկայացվող նվազագույն պահանջներ** | Բանկի կողմից սահմանված անշարժ գույքի գրավի վերաբերյալ ընդունելիության չափանիշներին համապատասխան | 1. Պետք է ունենա 100 տոկոս փաստացի ավարտվածության աստիճան:<br>2. Անշարժ գույքը չպետք է գտնվի 3-րդ և 4-րդ աստիճանի վթարային շենքում կամ ունենա 3-րդ և 4-րդ վթարայնության աստիճան<br>3. Անշարժ գույքի նվազագույն Լիկվիդային արժեք՝ 25,000,000 ՀՀ դր:<br>4.Չի հանդիսանում գյուղատնտեսական նշանակության հողատարածք |
| **Անշարժ գույքի գրավի գտնվելու վայրը** | Բանկի կողմից անշարժ գույքի գրավի վերաբերյալ ընդունելի բնակավայրեր | Գոտի 1- ք. Երևան (բացառությամբ Նուբարաշեն, Վարդաշեն, Սարի թաղ, Կոնդ, Նոր Խարբերդ և Նորագյուղ թաղամասերի, Կրիվոյի փ., Ֆրիկի փ. տները), ք. Աբովյան, ք. Գյումրի, ք. Դիլիջան, ք. Ծաղկաձոր, ք. Վանաձոր, Առինջ, Արգավանդ, Ջրվունի<br>Գոտի 2- ք. Արտաշատ, ք. Արմավիր, ք. Աշտարակ, ք. Արարատ, ք. Արթիկ, ք. Էջմիածին, ք. Գավառ, ք.Գորիս, ք. Եղեգնաձոր, ք. Հրազդան, ք. Կապան, ք. Մարտունի, ք. Սևան, ք. Իջևան, ք. Մասիս, ք., ք. Վեդի , Փարաքար, Պռոշյան, Ջրվեժ, Քասախ |
| **Եկամուտների պարզեցված վերլուծության պահանջներ** | -Վերաֆինանսավորվում է տեղափոխվող գրավային ապահովությամբ վարկ(եր) և/կամ առանց գրավային ապահովությամբ վարկ(եր)՝ եթե վերաֆինանսավորվող վարկը առնվազն սպասարկվել է 12 ամիս և այդ ընթացքում ժամկետանց օրերի հանրագումարը չի գերազանցում 1 վարկի գծով 5 օրը, (ընդ որում նշված 5 օրը չպետք է լինի դիմումին նախորդող ամսվա ընթացում) ապա եկամուտների վերլուծություն չի պահանջվում: Վերաֆինանսավորվող գումարից բացի լրացուցիչ վարկ հնարավոր է տրամադրել, եթե նոր վարկի ամսական վճարը ավել չլինի վերաֆինանսավորվող վարկի ամսական վճարի չափից:<br><br>Պարզեցված եկամուտների վերլուծությամբ վարկերի դեպքում նախապայման է վերջին 12 ամիսների ընթացքում ոչ ավել քան 5 անգրավ վարկ ստանալը և գրավի՝ Գոտի 1-ում ներառված լինելը Վերաֆինանսավորվող գումարից բացի լրացուցիչ վարկ հնարավոր է տրամադրել, եթե վերոնշյալ վերաֆինանսավորվող վարկ(եր)ը միայն ամսական տոկոսագումարների վճարմամբ չեն: | |
| **Լրացուցիչ վարկի տրամադրման տոկսադրույք** | Սույն առաջարկի շրջանակներում վերաֆինանսավորվող վարկի գումարից բացի լրացուցիչ տրամադրվող վարկի գումարի մասով կիրառվում է նույն տոկոսադրույքը: | |
| **Լրացուցիչ վարկի տրամադրման պայմաններ** | | Առանց եկամուտների վերլուծության վերաֆինանսավորվող գումարից բացի լրացուցիչ գումար հնարավոր է տրամադրել, եթե նոր վարկի ամսական վճարը չի գերազանցում վերաֆինանսավորվող վարկ(եր)ի ամսական վճարի չափը: |
| **Վարկի տրամադրման վճար** | Չի պահանջվում | |
| **Վարկի սպասարկման ամսական վճար** | Չի պահանջվում | |
| **Մարման եղանակ** | Անուիտետային՝<br>/մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում/,<br>Անհատական մարումների գրաֆիկ /Հավելված 1/ (կիրառելի չէ եկամուտների պարզեցված վերլուծության դեպքում) Վարկը հաստատող լիազոր մարմնի որոշմամբ | |

| | | |
|---|---|---|
| **Վարկի տրամադրման եղանակը** | Միանվագ կերպով հաճախորդի հաշվին և ուղղվում է այլ<br>ֆինանսական կազմակերպությունում առկա վարկ(եր)ի մարմանը | |
| **Ժամկետանց մայր գումարի տույժ** | 0.1% օրական | |
| **Ժամկետանց տոկոսագումարի տույժ** | 0.13% օրական | |
| **Վարկի վաղաժամկետ մարում** | Վարկառուն իրավունք ունի ժամկետից շուտ կատարելու վարկի ամբողջական կամ մասնակի մարում<br>Վաղաժամկետ մարման տույժ Չի կիրառվում | |
| **Վարկ/ Գրավ առավելագույն արժեք** | Գրավի իրացվելի արժեքի առավելագույնը 70%-ի չափով | Գրավի իրացվելի արժեքի առավելագույնը 50%-ի չափով Գոտի 1-ում,<br>40%-ի չափով Գոտի 2-ում |
| **Գրավի գնահատում** | Գրավը ենթակա է գնահատման Ֆասթ Բանկ ՓԲԸ-ի հետ համագործակցող գույքի գնահատում իրականացնող անկախ գործակալության կողմից և/կամ Բանկի աշխատակցի կողմից<br>Մինչև 10,000,000 ՀՀ դրամ վարկերի դեպքում անկախ գործակալության գնահատում չի պահանջվում<br>Բանկի աշխատակցի կողմից գնահատումը իրականացվում անվճար: | |
| **Ապահովագրություն** | Չի պահանջվում | |
| **Երաշխավորություն** | Ֆիզիկական անձի/Իրավաբանական անձի (պահանջվում է ըստ անհրաժեշտության) | |
| **Վարկառու** | 18-65 տարեկան ֆիզիկական անձինք | |
| **Գրավատու** | Գրավատուն պետք է լինի վարկառուն կամ վերջինիս հետ համատեղ տնտեսություն վարող անձ: Ընդ որում գրավատուն հայտի ներկայացման օրվա դրությամբ չպետք է ունենա ժամկետանց, հսկվող և ավելի խիստ դասերով դասակարգված վարկային պարտավորություններ: | |

**! Նախքան պայմանագրի կնքումը Բանկը Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են Ձեզ տրամադրվելիք վարկի**
*Փաստաթղթավորված /կամ լիարժեք փաստաթղթավորված/ են համարվում Հավելված 5-ով սահմանված եկամուտների տեսակները՝ համապատասխան կշիռներով:*
*Եկամուտների հիմնավորմամբ վարկերի դեպքում հաշվարկվում է ԸՊԵ /Ընդհանուր պարտքային վճարումների հարաբերությունը զուտ եկամուտներին գործակիցը՝ ԸՊԵ≤ 60% /ներառյալ հայցվող վարկի վճարումը/, ներառյալ Վարկառուի ընտանիքի անդամների /համատեղ տնտեսություն վարող/ վարկերի ամսական վճարումները:*

*Առանց եկամուտների հիմնավորմամբ և պարզեցված վերլուծությամբ վարկերի դեպքում ԸՊԵ չի հաշվարկվում*
*Եկամուտների հաշվարկում ներառվում է նաև Վարկառուի հետ փոխկապակցված և ընտանիքի անդամ հանդիսացող /համատեղ տնտեսություն վարող/ անձանց եկամուտները:*

*Առանց փաստաթղթավորված /կամ մասամբ փաստաթղթավորված/ եկամուտներ են համարվում Բանկի կողմից սահմանված չափանիշներին բավարարող եկամուտները*

*Վարկերի ժամկետները անհատական մարումների գրաֆիկով վարկավորված հաճախորդների համար Վարկային կոմիտեի որոշմամբ հնարավոր է վարկի ժամկետը երկարաձգել Գլխավոր պայմանագրի ժամկետի /21 տարի/ շրջանակներում:*
*Վարկային կոմիտեի որոշմամբ հնարավոր է առանձին դեպքերում վարկատեսակի նվազագույն գումարից ավելի փոքր գումար սահմանել, որը չի հանդիսանում շեղում վարկատեսակով սամանված վարկի գումարի սահմանաչափից:*

**Ծանոթություն**

1. Սույն սակագների շրջանակներում տրամադրվող ծառայություններից օգտվելու նպատակով վարկառուն՝ ստորև նշված երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարում է հետևյալ չափով.
- Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ,
- Իրավունքի պետական գրանցման վճար՝ 26,000-52,000 ՀՀ դրամ,
- Նոտարական վավերացման վճար՝ 12,000-30,000 ՀՀ դրամ,
- Գրավադրվող գույքի գնահատման վճար՝ 15,000-25,000 ՀՀ դրամ:

2. Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:
3. Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:
4. Ստորև ներկայացվում է ճշգրտվող հաստատուն տոկոսադրույքի հաշվարկման մեթոդաբանությունը.

Ճշգրտվող տոկոսադրույքը կազմված է հետևյալ բաղկացուցիչներից (տարրերից).
Բազային տոկոսադրույք
Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ
Ճշգրտվող տոկոսադրույքը հաշվարկված անվանական տոկոսադրույք է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

**ՏՃ= ՏԲ+ՏՀ**

Որտեղ՝
Տճ-Ճշգրտվող տոկոսադրույք,
ՏԲ– Բազային տոկոսադրույք,
ՏՀ– Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ:

Բազային տոկոսադրույքի հիմնական տոկոսադրույք - ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույք (https://www.cba.am/am)
Բազային տոկոսադրույքի երկրորդային տոկոսադրույք - ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի 6 ամիս ժամկետայնության եկամտաբերություն (https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx)

Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ – Վարկի տրամադրման անվանական տոկոսադրույքից նվազեցվում վարկի տրամադրման պահին բազային տոկոսադրույքը
Ճշգրտվող տոկոսադրույքի առաջին վերանայում/սահմանում - պայմանագրի կնքումից 3 /երեք/ տարի հետո
Պարբերական վերանայումներ - յուրաքանչյուր 6 /վեց/ ամիսը մեկ (փետրվար և օգոստոս ամիսների առաջին օրը)
Ճշգրտվող տոկոսադրույքների կիրառման ամսաթիվ - փետրվար և օգոստոս ամիսների առաջին օրվան հաջորդող մոտակա մարման ամսաթիվը
Ճշգրտվող տոկոսադրույքների կլորացում - մաթեմատիկական կլորացման կանոններով՝ հարյուրերորդական տոկոսի ճշգրտությամբ:
6. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև Բանկի հետ համագործակցող անկախ գնահատողների ցանկը սահմանվում են առանձին հավելվածներով:
7. Հնարավոր է վերաֆինանսավորել վարկառուի ընտանիքի անդամների վարկային պարտավորությունները: Սույն պայմաններով ընտանիքի անդամ է համարվում վարկառուի հայրը, մայրը, երեխան, ամուսինը, քույրը, եղբայրը:
8. Վարկը տրամադրվում է Բանկի բոլոր մասնաճյուղերում բացառությամբ «Ջվարթնոց» և «Տիգրան Մեծ» մասնաճյուղերի:
9. Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են.
- Վարկառուի և Գրավի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին,
- Վարկառուն հայտի ներկայացման օրվա դրությամբ չպետք է ունենա ժամկետանց, հսկվող և ավելի խիստ դասերով դասակարգված վարկային պարտավորություններ և դիմելու պահին նախորդող 12 ամիսների ընթացքում ժամկետանց պարտավորությունների հանրագումարը չպետք է գերազանցի 60 օրը (եկամուտների հիմնավորմամբ պայմանի դեպքում) և 15 օրը (առանց եկամուտների հիմնավորմամբ պայմանի և եկամուտների պարզեցված վերլուծության դեպքում):
- Վարկառուի հետ փոխկապակցված անձ/իք/ չպետք է ունենան գործող ժամկետանց, հսկվող և ավելի խիստ դասերով դասակարգված վարկային պարտավորություններ: Առանց եկամուտների հիմնավորման պայմանի վարկերի դեպքում սույն պահանջի ապահովումը պարտադիր չէ:

Եթե վարկառուի FICO գնահատականը փոքր չէ 550-ից, ապա 9-րդ կետի 2-րդ ենթակետի, պահանջը կիրառելի չէ Առանց եկամուտների հիմնավորմամբ վարկերի դեպքում: Եթե վարկառուի FICO գնահատականը փոքր է 550-ից, ապա նախորդ կետի պահանջը կիրառելի է, ինչպես նաև սահմանված վարկ/գրավ ցուցանիշից կիրառվում է 10%-ով ցածր պահանջ:

10. Վարկի մերժման գործոններն են.
• Վարկառուի և/կամ Գրավի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին և անբավարար եկամուտները:
11. Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում, վարկառուին տեղեկացում մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում:

12. Վարկի տրամադրում՝ պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 2 աշխատանքային օրվա ընթացքում:
13. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկի Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:
14. Հաճախորդի կողմից վարկի վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են՝ վարկի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսները, միջնորդավճարները և սպասարկման վճարները (առկայության դեպքում), իսկ տույժերը/տուժանքները (առկայության դեպքում) վարկի մարման նպատակով կատարված փոխանցումների համար և/կամ այլ գործառնությունների համար գանձվող միջնորդավճարները, վարկի սպասարկման նպատակով բացված հաշիվների սպասարկման համար գանձված գումարները, գործարքի նոտարական վավերացման, գրավադրվող գույքի պետական գրանցման և գնահատման դիմաց 3-րդ անձանց վճարված գումարները նվազեցման ենթակա չեն:

15. Քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ ծառայությունների տրամադրման պայմանները և սակագները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.fastbank.am, ինչպես նաև տեղադրված են Բանկի գործունեության վայրերում:
16. Վարկային պարտավորությունները վարկառուի կողմից չկատարվելու դեպքում Բանկն իրավունք ունի երաշխավորից պահանջել կատարելու վարկային պարտավորությունները, ինչպես նաև չկատարման հետևանքով վատանալու է երաշխավորի վարկային պատմությունը և հնարավոր է վերջինս զրկվի իր սեփական գույքից:

17. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ:
18. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:
19. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ՝ www.fastbank.am:

20. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ  ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ  ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ  ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:
21. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ**